ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/66 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի նոյեմբերի 19-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/66-1 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի փետրվարի 03-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և «Արպանիվ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի փետրվարի 03-ին կատարված փոփոխությունների արդյունքում Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը հաստատվել է համաձայն՝ Համաձայնագիր 2-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2025 թվականի նոյեմբերի 19-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/66-1 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով կրկին նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Երևանի ավտոբուս» ՓԲԸ**